

Լուցկիներ 2

Սեղանի վրա կա լուցկիների երկու կույտ: Երկու խաղացողներ հերթականորեն այդ կույտերից լուցկիներ են վերցնում, յուրաքանչյուր քայլում պահպանելով հետևյալ կանոնները:

- կարելի է վերցնել կույտերից միայն մեկից ցանկացած քանակի լուցկի,
- կարելի է վերցնել երկու կույտից էլ, բայց հավասար քանակով լուցկիներ:

Խաղացողներից յուրաքանչյուրի նպատակը սեղանի վրայի վերջին լուցկին վերցնելն է:

Եթե խաղի սկզբում կույտերից մեկում մեկ լուցկի կա, մյուսում՝ երկու (կասենք, որ խաղը սկսվում է (1,2) իրավիճակից), ապա դժվար չէ ստուգել, որ խաղը սկսողը մյուսի ճիշտ խաղի դեպքում, միշտ պարտվում է:

Այդպիսի իրավիճակն անվանում ենք աղետալի սկսողի համար:

Ձեր խնդիրն է տրված a թվի համար նշել այնպիսի b , որ (a,b) իրավիճակը խաղը սկսողի համար լինի աղետալի:

Մուտքը

Տրված է մի a թիվ ($1 \leq a \leq 1000000$):

Ելքը

Ելքում արտածեք b թիվը:

Օրինակ

Մուտքը.

2

Ելքը.

1

Մուտքը.

3

Ելքը.

5